<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

**ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Պատվիրատուն՝ ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու Բեռլին պոլիկլինիկա>> ՓԲԸ-ն, որը գտնվում է ք. Գյումրի, Հաղթանակի 25 հասցեում, ստորև ներկայացնում է ՇՀԱՊՁԲ-11/15-1 ծածկագրով շրջանակային համաձայնագրի ընթացակարգի արդյունքում 15.03.2014թ. կնքված պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2014թ. նոյեմբերի 17-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

***Փոփոխության պատճառ:*** Պատվիրատուի մոտ առաջացել է Պայմանագրով նախատեսված ապրանքների ծավալների ավելացման անհրաժեշտություն:

***Փոփոխության նկարագրություն:*** Կողմերը, հիմք ընդունելով լրացուցիչ ապրանքների ձեռքբերման անհրաժեշտության և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, որոշեցին ավելացնել գնման պայմանագրով նախատեսված ապրանքատեսակների ծավալը մինչև 20 տոկոսի չափով:

Սույն Փոփոխությամբ Պատվիրատուի կողմից լրացուցիչ գնման ենթակա ապրանքների առավելագույն գումարը կազմում է՝ 14.000 (տասնչորս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ծառայության գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Արդյունքում Պայմանագրի առավելագույն գումարը կկազմի 88.000 (ութսունութ հազար) ՀՀ դրամ:

***Փոփոխության հիմնավորում:*** Փոփոխությունը կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 9.4 կետը և այն չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 71-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Հ. Հարությունյանին:

**Հեռախոս՝ <u>055-74-14-16:</u>**

**Էլ. փոստ՝<u>asmick.a@yandex.ru</u>:**

**Պատվիրատու՝ ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու Բեռլին պոլիկլինիկա>> ՊՈԱԿ:**